Կազմի խցերս բոլորովին
Ցաւուրս մեծի զանակալին
Եղիազար տեառն վեհին
Որք հանդիպիք տուք զողորմին
Աշխատողացն և պատճառին»։

Նոյն տարին կը նորոգէ Ռէմիէի Ս. Գէորգ եկեղեցին և Ս. Յակոբի աւանդատունը. 1676ին Ս. Ստեփանոսի և Ս. Լուսաւորչի խորանները. 1677ին (ՄՁ. թ. 120) Յոպպէ մէջ մթերանոցներ, սենեակներ և խան մը։ Եղիազարի Ս. Յակոբի եկեղեցիին տուած յիշատակներու մասին (ՄՁ. թ. 532)։ Էջմիածին հասնելով 1682ին գործի կը ձեռնարկէ. 1691ին կը վախճանի և կը թաղուի Ս. Գայիանէի վանքը (Զամբռ, էջ 25—26 և 239). յօրինած է Սուազ Ուրքարու կտակը, ընդօրինակուած Գրիգոր Նիւսացիի Գիրք Կուսութեան ձեռագրին մէջ. (Էջմ. Ցուց. թ. 450) Եղիազար կթղի. ընդարձակ կենսագրութիւնը (տես Սաւալան)։

ԵՂԻԱԶԱՐ ՍՐԿ.— Մբ. 1640ին Ս. Յակոբի վանքին մէջ կ'ընդօրինակէ բոլորգիր Աւետարան մը զոր նոյն թուականին Գրիգոր պարք Պարոնտէր յիշատակ կուտայ վանքին։

ԵՂԻԱԶԱՐ ՎՐԴ. Մբ. Զռ. 1692ին. Ամգեցի Մինաս պարք. էն ՏՓ. 1694ին. անոր Օրագրութեան մէջ կը յիշատակուի։

ԵՂԻՇԷ ԱՐԲԵՊՍ. ԴՈՒՐԵԱՆ, ՊՈԼՍԵՑԻ, ՊԵ.— Որդի մհտ. Աբրահամ Զըմպայեանի 1815-1884, երկաթագործ, և Արուսեկի. Ծ. 1860 փետր. 23. Սկիւտարի Միր Օղլու կամ Փափաղ Օղլու փողոցի տան մէջ, ուր բնակած են երկար ատեն, աւազանի անունը Միհրան։

Միհրան կրտսերն է իր չորս եղբայրներուն մէջ։ Առաջինը՝ Յարութիւն, տաճկագէտ, օգնական-խմբագիր Մանդումէի Էֆքեարի. իբրև թարգմանիչ, Կարապետ Փանոսեանի խմբագրապետութեան ատեն։ Երկրորդը Պետրոս Դուրեան բանաստեղծը. ծնեալ 1851 և վախճանեալ 1872 Յունվար 21։ Երրորդը Սգրիպպաս, փաստաբան։ Յարութիւն, դեռ երիտասարդ, կը վախճանի Պետրոսէն տարի ուկէս ետքը, 1873 հոկտ. 23։

Դուրեան եղբայրները վաղուց կորուսած են իրենց երկու վաղամեռիկ քոյրերը, Էլպիս և Արտէմ։

Հայրերնին կը մեռնի Պարտիզակ (Պաղչէճիկ) 1884 մարտին.